Ձև N 5

« ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է՝ »

ՀՀ Մշակույթի նախարարություն
Պատմության և մշակույթի
հուշարձանների պահպանման
գործակալության պետ՝

_________ Ա.ԱԲՐՈՅԱՆ
կնքահարություն    անձը Ա.Ա.Հ

«26» __ 2015 թ.

Կ.տ.

# Ա Կ Տ - 1

N - 08 - 15 - 01

## ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Հուշարձանը

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՏԵՂ ԳՅՈՒՂԻ
ՍԲ. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒ ՏԱՐԱԾՔԻ ՀԵՆԱՊԱՏԵՐ

Հուշարձանի անվանումը

1.1. Համառոտ պատմական ակնարկ

Ներկայիս Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ գյուղը պատմական Հայաստանի Մեծ Հայքի Սյունիք աշխարհի Հաբանդ գավառում էր: Գյուղի տարածքը բնակեցված է եղել վաղնջական ժամանակներից, ինչի մասին են վկայում հնադարյան դամբարանները: Տեղ գյուղը հայտնի բնակավայր է եղել նաև միջնադարում: Գյուղի նշանավոր հուշար-ձաններն են Սբ. Գևորգ եկեղեցին, Մելիք Բարխուդարյանների ապարանքը: Եկե-ղեցու շրջակայքում պահպանվել են 7-14 դ.դ. գերեզմանոց, 10-13 դ.դ. խաչքարեր և միջնադարում կառուցված բնակելի և տնտեսական կառույցների մնացորդներ:

Գյուղի հարավային մասում՝ ժայռային դարավանդի վրա տեղադրված 4-5 դդ. Սբ. Գևորգ եկեղեցու արևելյան, հարավային և արևմտյան կողմերում պահպանվել են միջնադարում կառուցված, դարավանդը պարփակող կիսավեր հենապատերը: Մուտքը դեպի եկեղեցու տարածք իրականացվել է հարավային հենապատին կից կառուցված երկկողմանի մոտեցմամբ աստիճանների միջոցով, որոնք հավաքված են կամարակապ թաղի վերնամասում:

Հենապատի կառուցման վերաբերյալ պատմական տեղեկություններ չկան:

հիմնադրման, միջամտությունների, օգտագործման, ավերվածությունների վերաբերյալ տեղեկություն

1.2. Հուշարձանի ընդհանուր նկարագրությունը

Հենապատը կառուցված է անկանոն քարերից խառը շարվածքով, կամարակապ շքամուտքը՝ դեղնավուն սրբատաշ քարերով: Հենապատի շարվածքում օգտագործված են հորիզոնական դիրքով տեղադրված բազմաթիվ տապանաքարեր, ինչպես նաև

խաչքարեր:
Մոտեցումը դեպի եկեղեցի իրականանում է հարավային կողմում գտնվող հենապատի առջևում կառուցված ներկայումս կիսավեր կամարակապ թաղի վերնամասով, որի աստիճանները ավերված են: (նկ 1)

տիպի, հատակագծային և ծավալատարածական լուծումների համառոտ բնութագիր

## 2. Հուշարձանի արտաքին ճարտարապետա-կոնստրուկտիվ և դեկորատիվ տարրերի վիճակը.

2.1. Հիմքեր — Հիմքերը գտնվում են անբավարար վիճակում

հիմքերի և հիմնատակի տեսակները, նյութը, շաղախի առկայությունը, առկայության դեպքում՝ շաղախի տեսակը և վիճակը

2.2. Գետնախարիսխներ — -------

տեսակը, նյութը և վիճակը

2.3. Պատերը — Բոլոր հենապատերում առկա են փլուզված և բացակայող հատվածներ, ճաքեր, տարանջատումներ, փքված և չերտավորված տեղամասեր, շարաշաղախի խորքային հողմնահարում և խոռոչավորումներ: Կան թափված և անկման ենթակա քարեր, իսկ պահպանված շարվածքում քարերից շատերը՝ միջուկից անջատված են: Առավելապես ավերված է եկեղեցու արևելյան ճակատի տակ գտնվող հենապատը: (նկ 2)

Հենապատերը կառուցված են անկանոն քարերից խառը շարվածքով: Շարվածքում օգտագործված են հորիզոնական դիրքով տեղադրված բազմաթիվ տապանաքարեր, ինչպես նաև խաչքարեր: (նկ 3)

Քարերը որոշ հատվածներում բավական մեծ չափերի են, որոշ տեղերում մանր: Կրաբետոնե միջուկով պատերի հաստությունը 0,9-1,1 մ. է: (նկ 4)

նկարագրություն և քայքայումներ՝ շարվածքի խարխլումներ, ճաքեր, նստվածքներ, խոնավացումներ, մամռակալումներ և այն

2.4. Տանիքը — ------

տեսակի, նյութի և վիճակի նկարագրություն

2.5. Գմբեթներ, ռոտոնդաներ — ------

լուծումների և վիճակի նկարագրություն

2.6. Արտաքին և ներքին դեկորատիվ հարդարանքը — Վաղ միջնադարյան ճարտարապետության դեկորատիվ հարդարանքին բնորոշ տարրեր՝ վարդյակներ առկա են բացառապես շքամուտքի կամարի աջ և ձախ կողմերում, առաջին քարերին, որոնք դրված են դեպի թաղի խորքը շարունակվող պարզ կողաղեմով քիվագոտու վրա:

սյուներ, որմեր, քիվեր, երեսապատում, քանդակներ, ծեփածոներ, գունավորում, ճակատի որմնանկարներ և այլնի վիճակի նկարագրություն

## 3. Հուշարձանի ներքին ճարտարապետական-կոնստրուկտիվ և դեկորատիվ տարրերի վիճակը

3.1. Ծածկեր — Դեպի եկեղեցու տարածք տանող մուտքի երկկողմանի աստիճանների ներքևում կառուցված կամարակապ թաղը հիմնականում բարվոք վիճակում է, աննշան ճաքերով:

տեսակները (հարթ, թաղակապ) և վիճակի նկարագրությունը

3.2. Հատակներ — ------

տեսակը, նյութը և վիճակի նկարագրությունը

3.3. Պատեր, որմնասյուներ, որմնամույթեր — ------

նկարագրություն և քայքայումներ՝ շարվածքի խարխլումներ, ճաքեր, նստվածքներ, խոնավացումներ, մամռակալումներ և այն

3.4. Սյուներ, մույթեր — -------

վիճակի նկարագրությունը

3.5. Դռներ և պատուհաններ

------

լուծումները, տեսակը, նյութը և վիճակի նկարագրությունը

3.6. Աստիճանները

Հարավային հենապատին կից կառուցված երկկողմանի մոտեցմամբ բազալտե աստիճանները ներկայումս գրեթե ամբողջովին ավերված են: Հենապատին հարող հատվածում, աստիճանների եզրագծով, տեղադրված են բազալտե ջրառուներ, որոնք մասամբ են պահպանվել: (նկ 4)

տեսակը, նյութը, տեղադրությունը և քայքայվածության աստիճանը

3.7. Ծեփածո, քանդակային և դեկորատիվ այլ զարդարանք

------

նյութը և քայքայվածությունների աստիճանի նկարագրությունը

4. Գեղանկարչությունը

------

տեղադրությունը, քայքայվածության աստիճանի նկարագրությունը

5. Կիրառական արվեստի առարկաներ

------

կահույք, լուսավորող սարքեր, փայտի փորագրություն, մետաղի փորագրություն և այլն, բնույթը և քայքայվածության աստիճանը

6. Հուշարձանի տարածք.

6.1. . Եզրամայթեր, սալարկումներ

------

տեսակը, նյութը, տեղադրությունը և քայքայվածության աստիճանը

6.2 Այգի, բակ, դարպաս, ցանկապատ և այլն

Կամարակապ թաղն ու դրա վերնում գտնվող աստիճանները անհրաժեշտ է վերականգնել՝ նաև դեպի եկեղեցի մոտեցումը կազմակերպելու նպատակով: Հյուսիսային կողմում անհրաժեշտ է կառուցել նոր հենապատ, իրականացնել եկեղեցու հյուսիսային և հարավային կողմերի տարածքների ջրահեռացում:

պիտանելիության աստիճանի նկարագրությունը

*Ծանոթություն. 2.-5. կետերում (ենթակետերում) նշված բնութագրերին հղումներով կցել դրանց վիճակը փաստող համապատասխան նյութերը (հանույթ, գծագրեր, իրավիճակը նկարագրող սխեմաներ լուսանկարներ և այլ):

«Կազմեց՝»

«ԱՀԱՆԱ» ՍՊԸ

Մասնագիտացված կամ լիցենզավորված կազմակերպության անվանումը

«Սեփականատերը կամ նրա համաձայնությամբ՝ օգտագործողը»

անձը

Ակտը լրացնող անձը

Ճարտարապետ Հ. Հովսեփյան

Մասնագիտությունը ստորագրություն Ա.Ա.Հ

Մասնագիտությունը ստորագրություն Ա.Ա.Հ

Մասնագիտությունը ստորագրություն Ա.Ա.Հ

Կ.տ.

ստորագրություն Ա.Ա.Հ.

Կ.տ.

Կազմման ամսաթիվը «-05---» ----08-------- 2015 թ

(նկ 1)



(նկ 2)

